ՆՈՐԱՀԱՅՏ ՎԻՄԱԳՐԵՐ ԽԱՂԲԱԿՅԱՆ ՏՈՀՄԻ ՄԱՍԻՆ

ՍՈՒՐԵՆ ՍԱՂՈՒՄՅԱՆ

Խաղբակյան տոհմի պատմությունը համակողմանիորեն ուսումնասիրել է մեծավաստակ հայագետ Գարեգին Հովսեփյանը։ Տոհմի նախակարապետ Խաղբակ Խաչենցու ավագ որդին նշանավոր Վախթանգ իշխանն էր՝ «տեառն Հաթերքոյ», Մխիթար Գոշի հովանավորն ու Գոշավանքի կառուցման առատաձեռն մեկենասը[1]։ Վախթանգի եղբայրներ Վասակը և Գրիգորը, ինչպես և Վասակի որդի Պապաքը «արք քաջ և անուանիք, որ յահէ նոցա դողայր ամենայն զօրն տաճկաց»[2], ճանաչված զորականներ էին Իվանե Զաքարյանի բանակում։ Դեռևս միջնադարում բարձր են գնահատվել Վասակ զորապետի մղած պատերազմները Վայոց ձորում, երբ նա, Ախթամար Արփայեցու հետ, Իվանե աթաբեկի հրամանով, ազատագրում էր գավառի ռազմա-ստրատեգիական հանգույցները[3]։ Թուրք-սելջուկների դեմ մղվող պայքարում ցուցաբերած արիության համար նա ստանում է ընդարձակ հողատարածություններ և դառնում «կողմնապահ ի Գառնոյ մինչև ի Բարգուշատ»[4]։

Այս խնդրին անդրադառնալով, Սյունյաց տան պատմիչը նշում է, որ Վրաց թագավոր Լաշայի և աթաբեկ Իվանեի կողմից Լիպարիտ Օրբելյանը «և զմիւս իշխանն զամենօրհնեալն զՎասակ Խաչենեցի... կացուցանեն կողմնակալ ի Վայոց ձոր գաւառիս»[5]։

Վասակ Հաթերքցու իրավասության տակ է անցնում Վայոց ձորի մի մասը, ուր Խաղբակյանները խոշոր վերակառուցումներ են կատարում և նոր շինություններ բարձրացնում։

Թուրք-սելջուկների դեմ տարած հաղթությունների պտուղը արգասաբեր եղավ նաև Վասակի եղբոր՝ Գրիգորի համար։ Վերջինիս է հանձնվում Ուրծը, և հոգևոր կենտրոն է դառնում XIII դ. սկզբում Գրիգոր իշխանի ու նրա կնոջ՝ Զազայի ջանքերով կառուցված Աղշոց ս. Ստեփանոս վանքը[6]։ Արցախից դուրս կազմավորված այս նորաստեղծ ֆեոդալական տունը, այնուհետև, Հայոց պատմության մեջ հայտնի դարձավ Խաղբակյան կամ Պռոշյան անվամբ։ Սակայն Գրիգոր Խաղբակյանի հերոսապատումով լի կյանքը ողբերգական վախճան

---

1 Կիրակոս Գանձակեցի, Պատմություն Հայոց, աշխատասիրությամբ Կ. Մելիք-Օհանջանյանի, Երևան, 1961, էջ 215։

2 Նույն տեղում, էջ 205։ Կ. Գանձակեցու վկայությամբ՝ Վասակ Հաթերքցու որդիներն էին նաև Մկդեմը և Հասանը, «զոր Պռոշն կոչէին»։

3 «Պատմութիւն նահանգին Սիսական արարեալ Ստեփաննոսի Օրբէլեան արքեպիսկոպոսի Սիւնեաց», Թիֆլիս, 1910, էջ 368, «Դիվան հայ վիմագրության» (այսուհետև՝ «Դիվան»), պրակ III, Վայոց ձոր, կազմեց Ս. Գ. Բարխուդարյան, Երևան, 1967, էջ 123, արձ. 357։

4 «Դիվան», պրակ III, էջ 123, արձ. 357։

5 Ստ. Օրբելյան, էջ 397։

6 Գարեգին Հովսեփյան, Խաղբակյանք կամ Պռոշյանք Հայոց պատմության մեջ, մասն II, Երուսաղեմ, 1942, էջ 142։

Նկ. 1

ունեցավ։ 1222 թ., Գանձակի մոտ, Իվանե Զաքարյանի ղփչաղների դեմ մղած անհաջող ճակատամարտում սպանվեց Վասակի որդի Պապաքը[7], իսկ նրա հորեղբայր Գրիգորին գերեվարեցին։ Ղփչաղ հրոսակները Գրիգորին խոստանում են ազատություն՝ հայրենի կրոնը ուրանալու պայմանով։ Արի հրամանատարն ու մեծ հայրենասերը, իր տոհմին վայել հպարտությամբ, մերժում է այդ նողկալի առաջարկը։ Մոլեգնած ստահակները «քարշեցին զնա մերկ ի վերայ երկրի, և փշով քանցեցին զամենայն մարմինս նորա, և այնքան տանջեցին զնա, մինչև ի գանելն աւանդեաց զհոգին»[8]։

Այս երկու նշանավոր պատմական դեմքերին՝ Վասակ և Գրիգոր Խաղբակյաններին են նվիրված նորահայտ վիմագիր արձանագրությունները, որոնք ինչ-որ չափով լրացնում են մեծ հայրենասերների կենսագրությունը։

Արձանագրություններից մեկը հայտնաբերվել է 1977 թ. Եղեգնաձորի շրջանում, Թանահատի վանքի հարավային մասի կառույցներից մեկի պատի մեջ[9]։ Այն հղկված բազալտե խոշոր երեսապատ է (չափերը՝ 1,6×0,70), որն ագուցվել է Վասակ իշխանի 1215 թ. վերակառուցած եկեղեցու որմի մեջ։ Երբ 1270-ական թվականներին կառուցվում են ներկայումս պահպանվող Թանահատի եկեղեցիները, հնագույն շինությունները ուշադրությունից դուրս են մնում և աստիճանաբար ավերվում։ Դրանց քարերն օգտագործվում են նոր կառույցների համար, որի հետևանքով էլ արձանագրված այս քարը տեղադրվել է պատի մեջ[10]։

Թանահատի վանքի շրջակայքի ավերակների պեղումների ընթացքում հայտնաբերված ԹՎ ՌԿԴ (1215) ՆՈՐՈԳԵՑԱՒ համառոտ և անորոշ արձանագրության[11] հիման վրա Ի. Ղարիբյանը ենթադրել է, որ V—VII դդ. հնություն ունեցող եկեղեցին ավերվել է XI—XII դդ. և վերանորոգվել 1215 թ.։ Նորահայտ արձանագրությունը (Նկ. 2) հաստատում է Ի. Ղարիբյանի ենթադրությունը։ Միաժամանակ այն տեղեկացնում է, որ 1215 թ. Վասակ Խաղբակյանը վերստին նորոգել է թուրք-սելջուկների կողմից ավերված եկեղեցին և ազատել կուպարից։ Տվյալ իրադրության մեջ հնարավոր է ենթադրել, որ իրենց իրավասության տակ գտնվող տիրույթներն ու հաստատությունները

7 Հետագայում Պռոշ իշխանը եղբոր անունով կոչեց իր որդիներից մեկին։

8 Կ. Գանձակեցի, էջ 206։

9 Պեղումների հաշվետվությունը տե՛ս Ր. Ղարիբյան, Գլաձորի համալսարանի պեղումները («Բանբեր Երևանի համալսարանի», 1971, № 2, էջ 251—260)։ Ճարտարապետական կառույցների վերաբերյալ ջահեկան ուսումնասիրություն ունի Ս. Ղ. Մաթևոսյանը, Գլաձորի (Թանահատի) վանքի համալիրի ճարտարապետությունը (անտիպ)։

10 Հայկական ՍՍՀ Պետշինի հուշարձանների պահպանության և վերականգնման վարչության կողմից սկսվել է Թանահատի վանքի վերանորոգումը։ Այդ ընթացքում քարտաշ որմնադիրներ Վ. Մակարյանը և Ս. Չելեբյանը գտել և մեզ են տրամադրել հիշյալ արձանագրությունը, որի համար հայտնում ենք շնորհակալություն։

11 Ի. Ղարիբյան, նշվ. հոդվածը, էջ 253։ Ի դեպ, եկեղեցու կառուցման նախորդ շրջանից տեղում հայտնաբերվել են միայն 6 տապանագրեր («Դիվան», պրակ III, էջ 88—89, 92)։ Մի արձանագրություն էլ եղել է կիսով չափ թաղված խաչքարի վրա, և անվանի վիմագրագետ Ս. Բարխուդարյանը հնարավորություն չունենալով ամբողջացնել խաչքարը երիզող արձանագրությունը, այն, ենթադրաբար, համարել է եկեղեցու կառուցման ժամանակակիցը («Դիվան», պրակ III, էջ 90, արձ. 250)։ Խաչքարն այժմ գտնվում է Էջմիածնում (Նկ. 1), արձանագրությունը հետևյալն է՝ ՌԿԴ (1215) ԵՍ ՔՈՒՐՋԱՇԱՀ ԿԱՆԳՆԵՑԻ ԶԽԱՉՍ |Ի ԲԱՐԵԽԱՒՍՈՒԹԻՒ|ՒՆ Գ|ՐԻ/ԳՈՐՈ՝ ԵՂԲԱՒՐ ԻՄՈՑ, ՈՐ ԿԻՍԱՒՐԵԱ ՓՈ/ԽԵՑԱՒ Ի ՔՐԻՍՏՈՍ. ՈՐՔ ԸՆ/ԹԵՌՆՈՒՔ Լ ՅԻՇԵՍՋԻՔ Ի ՔՐԻՍՏՈՍ։



Նկ. 2

(այգի, ձիթահան, կուղպակ, գյուղ և այլն) աղատվել են նախկինում սահմանված հարկերից՝ կոպարից։ Հավանաբար, սելջուկներն ավերել են հնագույն բազիլիկան, Ստեփանոս Սյունեցու մատուռը և, գուցե, այլ հոգևոր կառույցներ, որոնք գոյություն են ունեցել նախքան Նոր Թանահատի վանքի կառուցումը։

Ներկայացնում ենք նորահայտ արձանագրությունը մեր վերծանությամբ (գծ. 1).

Ի ԹՎԻՍ ՈԿԴ (1215) ՎԷՐՍՏԻՆ ՆՈՐՈԳԵՑԱԻ ՍԼՈՒՐՅԲ ԵԿԵՂԵՑԻ-
Ս ՅԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԷՄԱՄԲՅ ՀԱՒՐ ՍԱՐԿԱՒԱԳԻՆ, ՀՐԱՄԱ-
ՆԱՒ ԱՐՍՏՈՒԱՅԾԱՍԵՐ ԻՇԽԱՆԻՆ ՎԱՍԱԿԱ, ՈՐԴԻՈՅ Խ-
ԱՂԲԱԿԱ, ՉԻ ԵՐ ՏԱՊԱԼԵԱԼ ՅԱՆԱՒՐԻՆԱՑ ԵՒ
ՍԱ ՇԱՏ ՉԱՐՉԱՐԵԱԼ ԱՐԵԱՄԲ ՉԱՓ, ԱՋԱՏԷԱՑ ՉԵԿԵՂ-
ԵՑԻՔՍ ԻՒՐ ԿՈՊԱՐՈՎՆ ԵՒ ՄԻԱԲԱՆՔ ՍԼՈՒՐՅԲ ՅՈՒԽՏԻՍ ԿԱՐԳ-
ԵՑԻՆ ՉՓՈԽՄԱՆ ԱՐՍՏՈՒԱՅԾԱԾՆԻՆ Գ (3) ԱՒՐ ՉԱՄԵՆ ԵԿԵՂԵՑԻՔՍ...



Գծ. 1

Երկրորդ արձանագրությունը վերաբերում է 1222 թ. տանջամահ արված Գրիգոր Խաղբակյանին։ Գրիգորի կին Զազա իշխանուհին, 1233 թ. ներկայիս Արարատի շրջանի Իմերզեկ գյուղի մոտ, Արջաձորի հանդիսավոր բարձունքի վրա, իրենց տոհմական կալվածքում, կանգնեցնում է ամուսնու հիշատակը



Ил. 3

հավերժացնող բազալտե խաչքար[12] (նկ. 3), որը կառուցվածքային հստակությամբ ու կատարողական հմտությամբ վիմաքանդակագործության անանախադեպ նմուշ է։ Գ. Հովսեփյանը և Գր. Կարախանյանը մանրամասն անդրադարձել են խաչքարի քանդակագործական մոտիվներին ու կատարողական արվեստին[13]։ Գ. Հովսեփյանը ընդօրինակել և հրատարակել է պառկած խաչքարի ճակատի համառոտ հիշատակությունները, իսկ թիկունքի արձանագրությունը նա չէր կարող նկատել։ Խաչաքիվի կենտրոնում փորագրված է Քրիստոսին վերագրվող ԵՍ ԵՄ ԼՈՒՍ ԱՇԽԱՐՀԻ հանրահայտ դարձվածքը, իսկ դրանից ցած՝ Քրիստոսի պատկերը։ Վերջինիս ձախ կողմում ոչ թե ավանդական դարձած Աստվածածնի (ինչպես կարծել է Գ. Հովսեփյանը), այլ ՊԵՏՐՈՍ առաքյալի, իսկ աջում՝ ՅՈՀԱՆՆԵՍ առաքյալի քանդակներն են։ Խաչքարի ստորին մասի ասեղնագործ շրջագծում դրոշմված է Գրիգոր իշխանի բարձրաքանդակը, որից ցած, պատվանդանի վրա, փորագրված է՝

ԹՈՒԻՆ ՈՁԲ (1233). ԳՐԻԳՈՐ, ՈՐԴԻ ԽԱՂԲԱԿԱ։



Նկ. 4

Գր. Կարախանյանը ընթերցել է խաչքարի թիկունքի արձանագրության առաջին չորս և վերջին երկու տողերը։ Նրան մասնավորապես հետաքրքրել է արձանագրության վերջում հիշատակված անձը՝ Աբելը, որին և համարել է այս գեղապատշաճ հորինվածքի քանդակագործը[14]։ Հայտնի է, որ քարգործ վարպետներն իրենց անունը փորագրում էին ձեռակերտի երևացող մասում,

12 Երկատված խաչքարը տեղափոխվել է Էջմիածին, ուր և ցուցադրվում է այժմ։

13 Գ ա ր ե գ ի ն Հ ո վ ս ե փ յ ա ն, նշվ. աշխ., մաս I, Վաղարշապատ, 1928, էջ 81—82, Գր. Կ ա ր ա խ ա ն յ ա ն, Միջնադարյան կենցաղային քանդակներ («Գիտություն և տեխնիկա», 1975, № 11, էջ 19)։

14 Գր. Կ ա ր ա խ ա ն յ ա ն, նշվ. աշխ.։

խորանախաչի և քիվի միջի կենտրոնական գոտում կամ խաչքանդակի և ստորին մասի շրջագնդի միջև (ինչպես Ջուղայում)։ Սակայն հայտնի է նաև, որ հատկապես XII—XIII դդ. վարպետներն իրենց անունը, կոչման հետ կամ առանց կոչման, հիշատակում էին պատվիրատուի արձանագրության վերջում[15]։ Տվյալ դեպքում կիսում ենք Գր. Կարախանյանի կարծիքը՝ Աբելին համարելով Գրիգոր Խաղբակյանի հիշատակագիր խաչքարի քարգործ վարպետը։

Խաչքարը բաժանված է երկու մասի, որի հետևանքով եղծված են թիկունքի 12 տողանոց արձանագրության 8 տողերի որոշ տառերը[16]։ Սակայն, օգտվելով Կ. Գանձակեցու հաղորդումներից, տառամնացորդներից և ըստ բովանդակության այն վերծանում ենք հետևյալ կերպ (գծ. 2)։

ԱՅՍ ՆՇԱՆ ԿԵՆԱՑ ԿԱՆԳՆ-
ԵԱԼ Ի ՓՐԿՈՒԹԻ[ԻՆ] ՀԶԱՒՐ ԶԱՒՐԱԿԱՆԻ Ք[ՐԻՍՏՈՍ]Ի ԳՐԻ-
ԳՈՐ ԻՇԽԱՆԻ, ՈՐԴՈ ԽԱՂԲԱԿԱ, ՈՐ ԲԱԶՈՒՄ Ա-
[ՐՈ]ԻԹԻ[ԻՆ], ՔԱՋՈՒԹԻ[ԻՆ] ՑՈՒՑԵԱԼ ԸՆԴԴԵՄ ԹՇՆ-
[ԱՄԵԱՑ Խ]ԱՉԻ Ք[ՐԻՍՏՈՍ]Ի ԵՒ ՑԵՏՈՑ ԸՄԲՌՆԵԱԼ Ի ԳԱ-
[ՆՁԱԿ ՇԱ]ՀԱՍՏԱՆ, ԱՐԵԱՄԲ ՊՍԱԿԵՑ
[ԶԿԵԱՆՍ ԻՒՐ ԲԱՋ]ՈՒՄ ՏՈՒԺԻՑՆ։ ՈՐՔ ԵՐԿՐ-
ՊԱ[ԳԷՔ ՀԱՆԴԵՐՁԵԼ]ՈՑՆ Ի ՎԵՐԱ ԽԱՉ-
ԻՍ ՅԻՇԵՑԷՔ Զ[ՄԵԾ ԻՇԽԱՆ] ԳՐ-
ԻԳՈՐ ԵՒ ԶԶԱՅՆ՝ ԱՄՈՒՍԻՆ [ՆՈՐԱ],
ՈՐ ԶԽԱՉՍ ԿԱՆԳՆԵԱՑ ԵՒ ԶՎԱՍԱ[Կ]
ՈՐԴԻ ՆՈՐԻՆ ԳՐԻԳՈՐՈ։ ԱԲԷԼ։

Այսպիսով՝ հրապարակվող նորահայտ արձանագրություններն ունեն ոչ միայն կենսագրական (որը նույնպես կարևոր է), այլ նաև պատմական-տեսական կարևորություն։ Վասակ Խաղբակյանի վիմագիր հիշատակագրության շնորհիվ նոր տեղեկություններ ենք ստանում այն մասին, որ սելջուկ ավարառուները մեծ ավերածություններ են կատարել Հայաստանում, հարկատու են դարձրել նաև վանական հաստատությունները։ Բացի այդ, նորովի է հաստատվում այն միտքը, որ Թանահատի վանքը, նախքան նոր եկեղեցիների կառուցումը, եղել է Վայոց ձորի նշանավոր հոգևոր կենտրոններից։

Խիստ արժեքավոր է Կիրակոս Գանձակեցու Պատմության և Գրիգոր Խաղբակյանի հիշատակագիր խաչքարի արձանագրության հաղորդումների բացառիկ նույնականությունը։

---

15 Այդպես են ստորագրել Գրիգոր Տուտեորդու խաչքարի վարպետ Մխիթարը և իր աշակերտ Ավետիսը (Կ. Ղ ա ֆ ա դ ա ր յ ա ն, Սանահնի վանքը և նրա արձանագրությունները, Երևան, 1957, էջ 180, արձ. 169)։ Նման ուշագրավ մի արձանագրություն էլ պահպանվում է Գեղարդավանքից Էջմիածին տեղափոխված խաչքարի վրա, որի ստորին մասում, բոլորագրի և ուղղագիծ երկաթագրի խառնուրդով գրված է՝ ԿԱՆԿՆԵՑԱ/Ի ԽԱՉՍ Ի/ԲԱՐՁԽԱ/ԻՍՈՒԹԻ[ԻՆ] Գ/ՐԻ[ԳՈ]ՐԻ ՎԱ[Ր]ԴԱՊԵՏԻ. ՈՐՔ ԵՐԿԻՐՊԱԳԱՆԷՔ ՅԻՇԷՍ/ՋԻ[Ք] Ի Ք[ՐԻՍՏՈ]Ս, ԸՆԴ ՆՄԻՆ ԵՒ ԶՈՀԱՆՆԵՍ ԿԱԶՄՈՂ ԵՒ /ԶՄԵՀՐ[ԱԲ]/, ԶԻԳՆԱ[ՏԻՈ]/Ս, ԶԱԲՐԱ[ՀԱ]Մ ԵՎ ԶԱ/ԹԱՆԱՍ ԱՇ/ԽԱ[ՏԱԻՈ]ՐՔ (նկ. 4)։ Խաչքարը կանգնեցվել է Այրիվանքի առաջնորդ Գրիգոր վարդապետի հիշատակին, XII դ. վերջում կամ XIII դ. սկզբում։ Ոհաննես վարպետի ձեռակերտ մի շարք խաչքարեր պահպանվում են Գեղարդում։

16 Տեխնիկական պատճառներով հնարավոր չէ ստանալ արձանագրության հրապարակելի լուսանկարը։



Գծ. 2

Թանահատի վանքից էջմիածին տեղափոխված խաչքարի արձանագրությունը ուշագրավ է ժամանակագրական առումով (1215 թ.) և հայոց անձնանունների մեջ առաջին անգամ դիտված Քուրզաշահ անվան հիշատակությամբ։

Առաջին անգամ վերծանվող և հրապարակվող սոնյն արձանագրությունները, համոզված ենք, օգտակար նյութ են պարունակում Խաղբակյան նշանավոր տոհմի առավել ամբողջական պատմության ստեղծման համար և այդ առումով դրանց հայագիտական նշանակությունը անվերապահ է։

НОВОВЫЯВЛЕННЫЕ НАДПИСИ О ХАХБАКЯНАХ

СУРЕН САГУМЯН

Резюме

Васак и Григор Хахбакяны являются выдающимися деятелями национально-освободительного движения XII—XIII вв. Васак совместно с Липаритом Орбеляном освободил от иноземных захватчиков Вайоц дзор и впоследствии был назначен Захарянами наместником области Гарни-Баргушат.

В 1222 г. во время битвы с кипчахами близ Гандзака Григор был взят в плен и казнен.

Нововыявленные надписи касаются деятельности Васака и Григора и с этой точки зрения представляют значительный интерес.

Надписи, относящиеся к деятельности Васака Хахбакяна, обнаружены в 1977 г. во время раскопок Танаатского монастыря (Ехегнадзорский район).

Согласно этим надписям, Васак в 1215 г. отремонтировал местные церкви и освободил их от налогов. В 1233 г. жена Григора, княгиня Заза, в память своего супруга в селе Имирзек Араратского района установила хачкар с надписью, гласящей о великих подвигах своего супруга Григора. Указанный хачкар (мастер Абел) ныне находится в Эчмиадзине. Надпись его целиком издается впервые.